

մանակ պատերազմներ էին մղում Ասորես-
տանի դէմ և թողել են մեզ շատ հետաքրք-
րի բեկնադիր արձանագրութիւններ, որ
յետին ժամանակներս ուսումնասիրում են
Պ. Պ. Մ. Նիկոլսկի, Վ. Բեկլը և այլն: Այս-
պէս ուրեմն, զոնէ՛ փոքր Ասիոյ արեւելեան
մասում բրախիկեֆալական հայկական տի-
պարը պէտք է համարել յետին, եկտոր, որ
միջամուխ է եղել գոլիստիկեֆալական տիպա-
րի երկրեր:

Եթէ ինկառի տուններ այն դէպքը՝ թէ
գոլիստիկեֆալները գերակշռում են նաև Ե-
գիպտոսի Ասորոց, Եռնաստանի, Իտալիոյ,
Պիրինէի թերակղզու հնագոյն գերեզմաննե-
րից արտահանած գանգերի մէջ, թէ դոքա
ներկայումս էլ բնորոշում են հիւսիսային Ա-
փրիկէի Սպանիոյ, հարաւային Իտալիոյ և
այլոց բնակիչների տիպը, այն ժամանակ Սեռ-
ջիի ենթադրութիւնը՝ Միջերկրական ծովի
ազդատահմի տարածութեան մասին ի հնումն՝
հաւանական է դառնում փոքր ի շատէ՛, թէ և
լիովին չէ բացատրում, թէ ի՞նչպէս է դոյա-
ցել Եւրոպայի արդի բնակչութիւնը այս ազ-
դատահմի խառնուելուց արիական յեղերի
հետ: Բանը նորանումս է, որ այդպիսի գո-
լիստիկեֆալական զանգեր մենք զանում ենք
ինչպէս միջին Եւրոպայի քարեզէն դարերի
գերեզմաններում, այնպէս և միջին դարերի
սկզբի (մինչև 10-րդ դարը) գերեզմաններում՝
Փրանսիայում, Գերմանիայում, Ռուսիայում
ևս և այնպիսիների մէջ, որոնք, անտարտ
կոյս, պատկանում էին Գերմանացոց և Սլաւ
ազգերին: Դա ապացուցանում է, թէ գոլի-
ստիկեֆալական տիպարը երբեմն տարածուած
էր նաև արիական ազգերի մէջ, սմանք կար-
ծում են թէ դա նոցա մէջ մինչև անդամ
գերակշռող էր: Ուրեմն՝ պէտք է ընդունել,
որ դա այս դէպքում նման էր Միջերկրա-
կան ծովի ազդատահմի և թէ բրախիկեֆալ-
ների յետագայ յառաջ խաղացումը պայմա-
նաւորուած էր ոչ թէ արիական տարրով, այլ
մի ուրիշ պատճառով, ինչպէս կարծում են
սմանք—միջին Եւրոպայի արխացած բնակչու-
թեամբ, որ նուաժուած Արեւաց ձեռքով, սեպ-
հականել է իրան նոցա լեզուն, բայց իւր բազ-
մաթուութեան, կենսունակութեան և բազ-

մածնութեան շնորհիւ, կամաց կամաց դերա-
կշռող հանդիսանալով՝ իւր տիպարի տիրապե-
տութիւնը հաստատել է միջին Եւրոպայի և
Եւրոպական Ռուսիայի ժամանակակից ազգա-
բնակչութեան մէջ:



ՄԻ ՀԱՏՈՒԵԾ

ՌՈՍՏԱՄ—ԶԱԼ

Վ. Գ. Բ. *

Դարիւն ի. տաս օր նիսան ** գնացիր,
քսան մնացիր:

Ռոստամ ուր մարտիւր ժողովից, տասց կու-
րուղչուն: Դնա սահրանգէն տըսի, չայիբէր ¹
շինուիր, թի չէ, ծաղկաիր եղիր ի, թի չէ,
մհինք ² ալրուբէր եղիր ի, մհա վերու ³ օչ-
խար կայ մէ, խաղալ կայ ինի, մինք տերթանք
սահրանգին ⁴ սէհր անելիւ:

Էլաւ զթխթիւր գրից, յրեոզկից քաղք-
նէք: Մերարէ Բարին ուր կուշումով իրի ⁵
Տիւսէ Սաղարի ուր կուշումով իրի, յրեոզ-
կից գիողարզ ուր կուշումով իրի, յրեոզկից
Զանգէ, Շահարի իրի, յրեոզկից Գիւ իրի,
փալաւանքաւր ըրադի բարաւից ⁶:

1. Արտասեղիներ. 2. քսաններ 3. վայրենի

4. զրօսարան. արարան 5. եկաւ 6. ժողովից:

* Ռոստամ—Զալ Պարսից ժողովրդական վիպ է,
որ մինչև այսօր էլ պատմում եւ չայ ժողովուրդը զանազան
վարիաններով եւ քարքաններով, զոնէ մեզ յայտնի են
Մոկաց և Արարանցոց (Մշի) քարքանով: Ներկայ հաստա-
ծով Մոկաց վարիանից մի փոքրիկ եմուշ ենք ցայիս, յու-
սալով կարճ ժամանակից յետոյ ևս ամբողջ նրասարակել
առանձին գրոյիով: Ֆիրդուսու ներկին ծանօթ ընթերցողը
նկատել կարող է, որ այս հաստածը Ռոստամի Թուրանում
կատարած որսորդութեան ճեպարանն է: Մեզ համար առան-
ձնապէս նկատելիական է այս վիպը նորանով, որ Մոկսիս
նորեկացու ժամանակներն իսկ գոյութիւն ունէր Հայոց
մէջ: Արարանցոց վարիանով պարսից վիպի հերոսներն ու
Սասնայ ծոերը ցեղակից են իրար: Այս խնդիրները, ինչ-
պէս և վիպի ճակ—նամէի հետ ունեցած առնչութիւնը
կաշխատենք պարզել առանձին յօդուածով:

Գ. Վ.

** ԾՈՆ — Նիսան Բարախիցիներէ ինչպէս ևս
սեմական ուրիշ ազգերի մէջ տարւոյ, առաջին ամիսն է
որ մօտաւորապէս մարտ ամիսն էր սկսում:

Էլան ուրինց չաղբբիր առինս կինացինս¹ սէհ-
րանդի մէջ զեարկիցին զեառնս² Էլան զիանաչ
կարմիր թալըցին չաղբի վերայ քեամին կը
զեարկին կվերուցին Ռոստամ Էլու զբրգոյ,
Փէրամազ յրեողկից ճամբիս վերայ կարաւիւլ,
զիւ յրեողկից կարմնջի վերայ կարաւիւլ,
ուր կուշումին իղին³ Էտու ասաց. — Սահրանդի
մէջ ուրախութիւն ըրէք ձեզի խամա զվերու
օշխար սպանըցէք, զխազալ սպանըցէք, զսա-
յիրքեր արըծացէք, զբիւլիւր ծաղկըտիր կո-
խըրծեցէք, յաղբբիրն ըրաղի աւիրըցէք:

Ռոստամն էլ Էնքան խմիր ի սարխոշ ի²
ակախ⁵ չունի: Սէհրանդէն աւիրիցին⁶ Թոզ
Էտու վերայ: Ռոստամ կանչից փալաւանքտիր
իրիւ ըսաց. — Նիս խլխուեն⁴ տերթամ⁵ Ալ-
ֆատիան-Ջարա-Փիշանի սէհրանդի մէջ նըս-
տիս Էլ ըմ խիւք գլխից կինաց:

Մնաց լիւսացաւ Մնաց Ռոստամ խլխուեն
ակախ Էկաւ վերայ նստաւ կանչից փալա-
ւանքտիրունս ըսաց. — Նիս յիրկուն ինչ ըմ ափս:
Ասաց. մինք չինք զիւր (ուրացան): Կանչից
Գիւ իրիւ ըսաց. — Գիւ Էիս յիրկուն ինչ ըմ ափս:
Ըսաց. — Տիւ յիրկուն ափս իս, մինք տեր-
թանք Ալֆատիս — Ջարա-Փիշանի սէհրանդի մէջ
նստինք, զէնու չայիրքեր ըրաղի տարըծանք,
զէնու ծաղկըտիր ըրաղի տըկեոխինք, զէնու
յաղբբիրքեր ըրաղի տաւրինք, գառնանք կիանք,
Էրթանք միր առնս նստինք:

Էլան զչաղբ խիւաթ վիրուցին. Էլան
կինացին Ալֆատիայ սէհրանդի մէջ նստան.
Ռոստամ չաղբ Էզար Ալֆատիայ չաղբի տեղ,
չաղբ ըմ Էլ Էզար Հմանի չաղբի տեղ, չաղբ ըմ
Էզար Փիրանի* չաղբի տեղ, Գիւու չաղբ Է-
զար Ղարամանի չաղբը տեղ, չաղբ ըմ Էզար
Փիլասըմի չաղբի տեղ փալաւանքտիրու չաղբ
Էզար Թիւրանայ փալաւանքտիրու չաղբը տեղ,
զբրգոյ Փէրամազ յրեողկից կարաւիւլ, Գիւ
Գոզարդ յրեողկից կարմնջի վերան կարաւիւլ,
իղին Էտու կուշումին ըզկուշում⁶ բրախից,⁶
ասաց. — Ընկըցէք սէհրանդի մէջ, ձի խամար
նէձիր⁷ արէք: Զչայիրքեր ըրաղի էրըծա-

ցինս զծաղկանիւր բիւլիւր կոխըցինս զյախ-
րքեր ըրաղի աւիրցինս Թոզ մառախուեն¹
Էտու վերա սէհրանդին:

Թիւրանայ թաղաւուր նստաւ վերա ուր
թախտինս բիւլիւր կանչից ուր վզիրս փալա-
ւանքտիրս ըրաղի ժողվից: Էսաց. — Կուրուզին
ըսաց. — Գնա իրիւ ձի սահրանդէն բացու իր ի
ձիւն վերէն կինացիր ի մէ չայիրքեր կանա-
չայիր ի մէ ծաղկըտիր Էղբր ի յախրքեր
Էղբր ի մէրու օշխար կայ ինիւ Թի չէ. մինք
տերթանք սէհրանդէ ուրախութիւն Էնինք
մի խամա:

Կուրուզին առից զղիւրին² Գնաց սէհ-
րանդէն իրիւից, տաւերկու խէւաթ զարկած
սէհրանդի մէջ. իրիւից զիւաթքեր իրարուց
ձիւկից, զեարձաւ յիւս Էկաւ զղիւրին Էթլ
յիւձիւ թաղաւուրինս Հիւս զեաղբաւ: Թա-
ղաւուր ըսաց. — Էդ ինչ Էղբր քեզի: Ըսաց. —
տաւերկու խէւաթ մեաչ քիւ սէհրանդին
դրած ի խէւաթ ըմ քիւ խէւաթը տեղն ի
զարկած, խէւաթ ըմ Ղարամանը խէւաթը
տեղն ի զարկած, խէւաթ ըմ Հմանը խէւաթը
տեղն ի զարկած, խէւաթ ըմ Փիրանի խէ-
ւաթը տեղն ի զարկած, փալաւանքտիրու
տիւ ըրաղի խիւաթքեր զարկած ի չայիր-
քեր էրըծացած ի զծաղկըտիր կոխած ի
վերու օշխար սպանած ի զյախրքեր բի-
րաղի աւրած ի սէհրանդին ըսկուն էրած,
Թոզ մառախուենս ալ տէր չմանչայ:

Թաղաւուր ըսաց. — Փիրանս վզրին ըսաց,
Էն վոյլ ի ուր խուզիւց կշտացիր ի իկիր իմ
սէհրանդի մէջ նստիր ի Ըսաց. — Թաղաւուր
Ռոստամէ Զալ չըլնր, վերա տխըրին մարդ
չիայ կեայ քիւ սէհրանդի մէջ. յասօր իկիր
ի վերա տերթայ, ընցկուն Էնինք, վերա մե-
ղի չախաթած. Բհար⁵ Էտու զեախ մէկ Էլ
վզիրս ասաց. — Հմանս Էն վոյլ ի ուր խողիւց
կշտացի իկի իմ սէհրանդի մէջ, շատ կազ ի
վըր ուր ումինս Ըսաց. — Տիւ տը զձը չխար-
ցնէք: Երեողկից զքաթը⁴ ի մէկ զիւ գրի-
կանչինք բիւլիւր ախշարք ժողվինք, Էրթանք
Էնունց չուրս բիւլիւր բռնինք, խորբարիր Է-
նունց մնէն չպրծնք: Ըսաց. — Է՛, ըսաց, մէ խա-

1. Իրաւունք. 2. արած, զիւնցած. 3. ուշ, միտ.

4. յուսարացին. 5. քաւսիցի:

* Հման եւ Փիրան Թուրանայ թաղաւորի վաղիւնեւն
են:

6. յաց բողնց, արձակնց. 7. որս.

1. մառախուղ. 2. անաղիսակ.

3. Գիւ, Էրեւ. 4. Գիւ անոյ, գրացիր

լաթ ըրիւք Հմանի խամար, Հման աղէկ փալաւան ի:

Ըլան կանգնան, տըսերկու խաղար մարդ սարը եանէն յրեոյկիցին, գնաց, Թագաւուր ուր թախտամով ճամբիս խիտ կինացին. կինացին խաւան դէմաց կարմնջին: Գիւ զկարմունջ բռնիր ի չթորկի մարդ ընցնը: Ընքան գետրդ կղարկին Գիւուն, ըսկուն ինչ տարրին կոանքտիր կղարկի: Գիւ զկարմունջ չթորկի ճամբախ չի տաց: Կանչից թագաւուր ուր վզրի վերայ, ըսաց. — Ըս ի՞նչ մարդ ի, էս կարմունջ բռնիր ի: Ըսաց. — Գիւն ի, ըսաց, էն մարդն ի ինչ եօթ տարի չողի մէջն ի կացիր, էն ինչ զՓրքնգիս Բեանգըհու քեաղքէն փախցըցուց, էն ինչ խառ Հիւանաշիւթուն կոխ էրի: Թագաւուր մօտիսացաւ, կանչից, ըսաց. — Գիւ, ըսաց, խեղ ձի տիւ իմ փալաւան ընիր, եիս քի աղէկ քեայիր ձի տը տէր, զքի աղէկ սիլախ¹ տը տէր, եիս քի մեծ քաղքնիր բեախշի տը տէր: Ըսաց. — Ի՛, քի աչքեր յիտ բաց, եիս իմ մհէլ² չիմ խաղ մէկ բեռ կուրիկ (էնկիտս քեան բեռ ըմ կուրիկ չհաշուից):

Զաւարէն կանչից, տսաց. — Ռոստամ, քիւնուց վիր իլի գիւ սպանիցին: Ռոստամ նըստաւ. կիրիշի, կիսի Գիւու ձէն կերթաց երկինք, ընցկուն կոխ կէնին: Ըսաց. — Ի՛, ըսաց, մէկ թաս զինի տուէք ձի, Գիւու ձէն անիւշ կկես կուու մէջ, քեանի Գիւ սաղիս ախշար մաղի փարէմ չէնի Ռոստամ էտու քինու:

Թիւրանաց թագաւուր վեար Գիւուն կանչից, ըսաց. — Գիւ, Էրանի ան մարդուն ինչ տիւն էնու փալաւան իս: Թիւրանաց վզրին մէկ սխալէր կէր, անուն էլ Փիլասըմ էր: Փիլասըմ յանկեախ³ էկաւ, խաւաւ կուուուն: Հըման ըսաց, Թագաւուր ինչ տիւ կըսէր, աղէկ ձին տուէք Փիլասըմին, աղէկ սիլախ տուէք Փիլասըմին, ըսաց կեոյ քի Փիլասըմ էկաւ, տի ի՛նչ էնի: Թագաւուր կանչից Փիլասըմին, ըսաց. — Փիլասըմ, քեանէ զիտիմ: Փիլասըմ Գիւուն մօտեացաւ, գետրդ ըմ էղարկ Գիւուն. Գիւ կորմնջից եթըլ էտու վեար Գիւու փութուն ընցաւ: Տաս փալաւան

խառ էնու էրկու վզրին ընցան սէհրանգըհի մէջ: Գիւ էլ ըմ կանգնաւ, էն եանէն էթըլ, էս եանէն եթըլ, էլ ըմ էկաւ վեար կորմնջին նստաւ:

Զաւարէն Ռոստամուն կանչից, տսաց. — Ռոստամ, իլի Գիւ սպանիցին, զկարմունջ տօին, չուրս բիւլիւր էղաւ կոխ: Ռոստամ էլ ըմ նստաւ. կիրիշի, Գիւու ձէն կկես կանչից. — Ի՛, մէկ փայտ⁴ զինի տուէք ձի, զգինին խմաւ, զլեռն էտի գեաին, քինու: Մեհրաբէ Բարբին գետրդ վերուց էկաւ գեաի Փիլասըմ, գետրդ ըմ էղար, Փիլասըմ մարտալ⁵ էտու յիոճիւ: Փիլասըմ գետրդ ըմ էղարկ Միլարէ Բարբին, էտու վեար էնուր սրտին, ձիուց իրի տակ, ընցաւ: Զանգէ Շահուրի գետրդ վերուց էկաւ գեաի Փիլասըմ, գետրդ ըմ էղարկ Փիլասըմին, Փիլասըմ մարտալ էտու յիոճիւ: Փիլասըմ գետրդ ըմ էղար Զանգէ Շահուրին, ձիուց իրի տակ:

Հըման զթուր քեշից, կինաց վեար Ռոստամուն չաղըր դռան, տը զՌոստամուն վիզ կարի, իրիշից պառաւ ըմ կեոյ յանգիւ, կանչից ըսաց. — Հման, տիւ է՛նչ էկիր իս ըստեղ, կրիլն էսա կտաւ, էսա սապան, էսա պղինձ ծիւր, տը զքի վլամ, քիւ պառանք կարիմ (հրիշտակ էր, շանք էտու):

Հման փախաւ:

Զաւարէն զգետրդն տօից, կինաց գեաի Փիլասըմ, գետրդ ըմ էղարկ Փիլասըմին, Փիլասըմ մարտալ էտու յիոճիւ, գետրդին զմարտալ կուտից: Մէ գետրդ էղար Զաւարին, Զաւարէն ձիուց իրի տակ, զթուր քեշից վիզ տը կարէր, Բեռաց Զաւարէն Ռոստամ լաւ էնու ձէն, որ լաւ նստաւ, կիրիշի մարդ ըմ Զաւարէն տիրի գետըն, թուր քեաշիր վիզ տի կարի: Կանչից վերէն, ըսաց. — Եիս էն կտիրիմ, ինչ երկինք զիտինք ստեղծիր ի, տիւ թուր անիս էղու վիզ կտրիս, եիս տըլնիմ մէկ զիւրդ գետրկիմ քի եօթ տապաղէն գեանու տակ մանիս: Ըսաց. — Գղը քեա՛թր, իմ խիալէն⁵ տիւ իր:

Ռոստամ կանգնաւ, ուր թուր կապից, ներիզ խանջար էղար մէջը, էնու բիւռ⁴ զլիւ

1. Զեկի.

2. Սեր, հաւատարմութիւն:

3. Այն մասնակ

4. աշտ 2. վահան.

5. Մոխով կարծիքով. 4 Բռնկուտ տեղ, դասակ

ընցաւ. զտիրեալան¹ կախից, զքեամար կապից, զըրէխէ² շապիկ խաղաւ, զքիւրք էթըլ վըր թիւին, աչքիր շուռ առից, յըմէն մէքեան շինու կթիւէ,³ էնու բեղիր օլիւրից, զականջ ընցաւ, էնու մաղիր կանդնան զրիւ շապիկ տիւս էտու: Կանչից սայիսքիրուն⁴ զձին թիւրիցին, սաղաթէ զին⁵ խախ քեամակ, աշաուզլամայ⁶ ուրքեր⁷ կախից, ձեռ էթըլ զգեւոր զիրուց, իրիք խարիր բաթման: Տիրըմ կանչից վերան, էրիւս առին յիրուր, ըցկուն զիւր զկեարկին յիրարու, անցկուն ինչ կարկուտ կեայ:

Քեախըսիր իրն բարաք ախաւս, թի Ռոստամ կինացիր թիւրանայ թագաւորի սահրանգի, առից ուր կուշում կինաց: Ասաց. — Երիս չերթամ, զՌոստամ տսպանին կուշումով: Էկաւ, տեսաւ Ռոստամ կանցին կոխ:

Դիւ զկարմունջ էթող, թիւրանայ թագաւոր լցուաւ մեանչ սէհրանգին: Շատ մարդ տսաց. «ախչարք աւրաւ: Թող էղիր ի էրկնուց իրիս բռնի»:

Ռոստամ գեւորդ ըմ էղայ կ զՓիլասըմ սպանից: Սաղիր չալիցին, իրանայ թագաւոր թիւրանայ թագաւոր, էրկու կուշում առին յիրուր, էնքան իրար ջարդիցին, էրուն էղաւ զիտ, զճամդաթիր կանը: Տիրըմ թըրխուց ընկեաւ թիւրանայ թագաւորու տքեար, թիւրանայ տքեար փախաւ, իրանայ թագաւոր ինկեաւ յիտիւ: Աւաշահատառիւտ ընցաւ, իրանայ թագաւոր գեարձաւ: Որ սպանուաւ, տիւ ողջ մնաք, որ մնաց, կինաց ուր տուն խասաւ ուր մրաղին: Տիւ էլ խասնիք ձի մրաղին:



¹ նեւ եւ անկ 2 Ջրակ 3 Չմանակ բաժակ

⁴ Չիսպաններին. 5 Թամր 6 Ոսկերած

⁷ տսպանակ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

Քնն ապրեցութիւնը մարդկային կեանքի երկարահետքեան վրայ: Անգղիացի յայտնի բժիշկ Ջէմս Սայէրը, իւր երկասիրութիւններէց մէկում, եկել է այն եզրակացութեան, որ տեսականապէս որոշելով՝ մարդու կանոնաւոր քունն 8 ժամից աւելի չպիտի լինի, Սակայն, ինչպէս վկայում է ինքը պ. Սայէրը, դարիս առաջնակարգ գիտնականները, որոնք իրանց ամբողջ կեանքը նուիրած են եղել գիտութեան զանազան ճիւղերի ուսումնասիրութեան, երբէք այդքան երկար ժամանակ չեն տուել քնի Օրին. Օկսֆորդի համալսարանի ուսուցչապետ Լէյզըր, այդ հռչակաւոր շինագէտը, թէեւ ամէն օր վեր էր կենում առաւօտեան ժամի 3-ին և քնում էր միմիայն 5 ժամ, 82 տարեկան մեծաւ:

Ճարտարապետ Բրունէլը, որն իւր ժամանակին մեծ համբաւ ունէր, իր կեանքի ընթացքում մեծ մասամբ օրական 20 ժամ էր աշխատում: Նա համարեա ամբողջ գիշերը զանազան գործերով էր զբաղւում և միայն 3 ժամ էր նիրհում այն էլ բաղկաթողում նստած. իսկ երբ վարժնում էր, իսկոյն գործի էր կաշւում, Նա շնայելով այդ գերբնական և ճշնական գործնութեան, որն անընդհատ շարունակւում էր ամէն օր, նա հասաւ զաւամակ ծերութեան:

Ժորժ Լիլիոտը (Լորդ Գետֆիլդ), որը մեծ հռչակ էր ստացել 1779—1793 թուականներին Ֆրանսիայի և Սպանիայի միացեալ զոյժերի դէմ քաջութեամբ պաշտպանելով Զիրբալտարը, օրական 4 ժամ էր քնում, բայց 86 տարեկան մեծաւ, Իսկ հանձարեղ Լուիսօլը, ծերութեան օրերում հաղիւ միայն 4 ժամ էր քնում, այն ինչ, երբ նա երիտասարդ էր, ինչպէս ինքն է վկայում, բաւականանում էր միայն 2 ժամուայ քնով:

Վերոյիշեալ բոլոր օրինակները, Ջէմս Սայէրի կարծիքով, ապացուցանում են, որ կեանքի երկարատևութիւնն ամենին կախումն չունի երկարատև քնից: Բայց դեռ հարց է. արդեօք ճշմարիտ է այդ, և միթէ վերոյիշեալ բոլոր դէպքերն ընդհանուր օրէնքից իրեն բացառութիւններ չպէտք է ճանաչուին:

*
* *

Իրախանիւր օր քորի ետ գոյն. — Յայտնի է, թէ որչափ մեծ նշանակութիւն ունի արդի եւրոպական կեանքում նորաձեւութիւնը (մոդան), Այ միայն չքեղ զարգարանքներն ու առօրեայ կեանքի անհրա-